

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նարինե Խաչատուրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Պեկին)

2019 թվականի հոկտեմբերի 27-30-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

- Պեկինի լեզվի և մշակույթի համալսարան և CCTSS /չինական գրականության թարգմանությունների և ուսումնասիրությունների աջակցության կազմակերպություն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն հայ-չինական միջազգային թարգմանչական և զարգացման համաժողովին,

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ազգային մամուլի և հրատարակության կառավարչության միջև «Չինաստանի և Հայաստանի նշանավոր աշխատանքների թարգմանության և հրատարակման նախագծի վերաբերյալ» փոխըմբռնման հուշագրի ստորագրում:

Ս. թ. հոկտեմբերի 27-30-ը գործուղվել էի Պեկին (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)՝ մասնակցելու հայ-չինական միջազգային թարգմանչական և զարգացման համաժողովին, ինչպես նաև ստորագրելու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ազգային մամուլի և հրատարակության կառավարչության միջև «Չինաստանի և Հայաստանի նշանավոր աշխատանքների թարգմանության և հրատարակման նախագծի վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիրը:

Գործուղման ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել առ այն, որ մշակութային և հրատարակչական գործի փոխանակման և համագործակցության համար Չինական մշակույթի թարգմանության և ուսումնասիրությունների աջակցության ցանցը /Chinese cultural translation and studies support network, CCTSS/ և ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ստանձնում են Չինական և հայկական դասական, մանկական, ճանաչողական գրականության թարգմանության և հրատարակման, միմյանց երկրներում տարածման և հանրայնացման աշխատանքները: Չինաստանը՝ լինելով Ասիական դասականների թարգմանության ծրագրի անդամ մշակութային նոր կապերի հաստատելու ջատագով է: Չինական կողմի առաջարկով կստեղծվի հարթակ քաղաքակրթությունների, մշակույթների ուսումնասիրման, փոխանակման և փոխճանաչելիության համար: Առաջիկա 5 տարիներին կողմերը ակտիվորեն կիրարկանացնեն այս նպատակները, ինչը համագործակցության նոր հնարավորություններ կբացի ակադեմիական ուսումնասիրությունների, կրթության և փոխճանաչելիության համար:

Մեծ ուշադրություն կդարձվի մանկական գրականության թարգմանության և միմյանց երկրներում տարածման ուղղությամբ: Կմշակվի գրադարանային համագործակցության ծրագիր: Հայկական կողմից առաջարկվեց մանկական գրականության հրատարակման ժամանակ ներգրավել երկու երկրների երեխաներին՝ նրանց վստահելով գրքերի փոխադարձ նկարագրողումները:

• ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Չին-հայկական գրականության փոխադարձ թարգմանությունների մասին հուշագրի ստորագրում.
2. Մասնակցություն հայ-չինական միջազգային թարգմանչական և զարգացման համաժողովին.
3. Հայ-չինական մշակութային կապերի խթանում.
4. Չինաստանի գործընկեր կազմակերպությունների հետ նոր պայմանավորվածությունների ձեռքբերում, համատեղ ծրագրերի մշակում:

31.10.2019

Նարինե Խաչատուրյան

